

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ  
ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ԵՐԵՎԱՆ 2024**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Աշմատի Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Աշոտ Վարազդատի Մաթևոսյան**

տնտեսագիտության թեկնածու  
**Սողոմոն Ռաֆայելի Միրզոյան**

Առաջադար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հուլիսի 11-ին ժամը 15:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. հունիսի 10-ին:

**014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝  **S. Ս. Մարտիրոսյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հայաստանյան առևտրային բանկերի հետագա զարգացման նկատառումով, չափազանց արդիական է գիտականորեն հիմնավորված մոտեցումներով ֆինանսական ռիսկերի վերահսկողության կազմակերպումը: Կարևորվում են վերահսկողական սթրես թեստավորման և կենտրոնացման համաթվերի մեթոդների կիրառման, ինչպես նաև թվային վերափոխման ուսումնասիրության ու դրա հետ կապված ռիսկերի վերահսկողության մարտահրավերներն ու հիմնախնդիրները: Վերահսկիչ սթրես թեստավորումը, հիմնարար գործիք է, հատկապես այն երկրներում, որոնք հաճախակի են բախվում արտաքին ցնցումների: Այն օգնում է մոդելավորել և գնահատել բանկերի խոցելիությունը և մշակել ռիսկերի մեղմման ռազմավարություն: Կենտրոնացման գործակիցների՝ Հերֆինդալ-Հիրշմանի, Էնթրոպիայի և Լինդայի համաթվերի, ուսումնասիրությունը թույլ է տալիս բանկերին արդյունավետ վերլուծել ակտիվների բաշխվածությունը և համապատասխան ներդրումային որոշումներ կայացնել: Բանկային թվային փոխակերպումը իր հերթին կենսական նշանակություն ունի: Թագավարակի ժամանակ թվային ծառայությունների ներդրումը ապահովեց բիզնեսի անընդհատությունը և ֆինանսական հասանելիությունը, հատկապես հեռավոր շրջաններում: Վերջիններս ոչ միայն տեսական մոտեցումներ են, այլև նաև գործնական նշանակության գործիքներ, որոնք ունեն ֆինանսական ռիսկերը կառավարելու, ոլորտային կենտրոնացումը գնահատելու և թվային դարաշրջանում մրցունակ մնալու կարևորություն: Գիտակցելով այս գործիքակազմի նշանակությունը և ներդնելով դա՝ ՀՀ առևտրային բանկերը կարող են ամրապնդել իրենց ներքին վերահսկողության կառուցակարգերը, բարձրացնել ֆինանսական կայունության մակարդակը և շարունակել հաճախորդներին մատուցել հիմնական բանկային ծառայություններ, որոնք, իրենց հերթին, նպաստում են տնտեսության ճկունության ավելացմանն ու բարգավաճմանը: Բանկային ռիսկերի վերահսկողությանը անդրադարձ է կատարվել թե՛ համաշխարհային, թե՛ հայրենական բազմաթիվ հեղինակների կողմից, սակայն նշված կոնկրետ կտրվածքով հետազոտությունները կրել են մասնակի բնույթ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընդգծվում է թեմայի արդիականությունը, իսկ առաջ քաշված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը խոսում է դրա արդյունքների կիրառման կարևորության մասին:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է հետազոտության արդյունքներով ձևավորված մոտեցումներով կատարել առաջարկություններ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղղություններով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության գործընթացները,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը կարգավորող ՀՀ և միջազգային իրավական ակտերը՝ ՀՀ առևտրային բանկերի տնտեսական նորմատիվների և ռիսկերի վերահսկողության վերաբերյալ առաջարկություններ կատարելու նպատակով,
- ուսումնասիրել ընթացիկ վերահսկողական սթրես թեստավորման փորձի արդյունավետությունը՝ ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի բացահայտման և մեղմացման տեսանկյունից,
- դիտարկել բանկերի թվային վերափոխման ընթացքում առաջացող կիբեռանվտանգության ռիսկերը՝ առաջարկելով համապատասխան ռազմավարություններ դրանք արդյունավետորեն մեղմելու համար,
- գնահատել թվային փոխակերպման ազդեցությունը ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության վրա,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում վարկային ներդրումների կենտրոնացվածության աստիճանը՝ բարձր կենտրոնացումները բացահայտելու նպատակով,
- վերլուծել ՀՀ առևտրային բանկերում կիրառվող կենտրոնացման համաթվերը, բացահայտել հնարավոր խոցելիությունը՝ կենտրոնացման բացահայտումների առումով՝ առաջարկելով կենտրոնացումների գնահատման նոր մոտեցումներ՝ ֆինանսական կայունության մակարդակը բարձրացնելու նկատառումով:

**Հետազոտության օբյեկտն ու առարկան:** Ատենախոսության օբյեկտը ՀՀ-ում գործող առևտրային բանկերում կիրառվող ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համակարգն է, որի ուսումնասիրությունը ներառում է տարբեր դիտանկյուններ և բաղադրիչներ՝ միտված ֆինանսական տարաբնույթ ռիսկերի պայմաններում բանկերի կայունության ու ճկունության ապահովմանը: Ատենախոսության առարկան ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության համատեքստում սթրես թեստավորման, կենտրոնացման

գործակիցների (Հերֆինդալ-Հիրշման, Լինդա և Էնթրոպիա) և թվային փոխակերպման գործիքների ներդրման հիմնախնդիրներն են:

**Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:** Տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտի վերաբերյալ հայրենական ու արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրապարակումների տեսական և մեթոդական դրույթները և վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են ՀՀ առևտրային բանկերի տնտեսական գործունեության և հաշվետվողականության վերաբերյալ նյութեր, ՀՀ վիճակագրական տվյալներ, իրականացված ուսումնասիրության ընթացքում հավաքագրված ու մշակված առաջնային տեղեկատվություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական, վիճակագրական, ինդուկցիայի, դեդուկցիայի, գիտական աբստրակցիայի, համեմատական, գործոնային, բազմակի գծային ռեգրեսիոն, քանակական վերլուծության մեթոդներ:

**Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:** Ատենախոսությունը իրենից ներկայացնում է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողությանն ուղղված, մեթոդական մոտեցումների տեսական և գիտական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի առաջարկություններ՝ ուղղված ատենախոսությամբ առաջ քաշված հիմնախնդիրների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքները և կատարված առաջարկությունները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ Կենտրոնական և առևտրային բանկերում՝ նպաստելով ֆինանսականի ռիսկերի ներքին վերահսկողության լավարկմանը: Ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել նաև ֆինանսների և ռիսկերի կառավարում դասավանդողներին և դրա վերաբերյալ հետազոտություններ իրականացնողներին:

**Ատենախոսության հիմնական արդյունքը և գիտական նորույթները:** Ատենախոսության հիմնական արդյունքը առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործմամբ ֆինանսական ռիսկերի կանխարգելման նոր մոտեցումների մշակումն է, որը հիմնավորվում է հետևյալ գիտական նորույթներով՝

1. Բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները և դրանց հիման վրա

առաջարկվել ռիսկերի վերահսկողության իրականացման բարելավված գործիքակազմ՝ գործունային համապարփակ վերլուծական հիմքով:

2. Հիմնավորվել ու հստակեցվել են վերահսկիչ սթրես թեստավորման կիրառման անհրաժեշտությունն ու ուղղությունները՝ որպես ՀՀ բանկերում ռիսկերի համապարփակ գնահատման և մեղմացման գործիք: Ապացուցվել է, որ տարբեր սթրեսային սցենարների միաժամանակյա մոդելավորմամբ հնարավոր է ավելի ամբողջական պատկերացում կազմել բանկերի առջև ծառայած ռիսկերի վերաբերյալ, բացահայտել խոցելիության աստիճանը, ինչպես նաև մշակել ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարություն՝ միտված բանկերի ճկունության և ֆինանսական կայունության ապահովմանը:

3. Մշակվել է ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացման գնահատման մոտեցում, հիմք ընդունելով Հերֆինդալ-Հիրշմանի, Լինդայի և Էնթրոպիայի գործակիցների վերլուծական փոխլրացնող արդյունքները, որի միջոցով ՀՀ առևտրային բանկերը հնարավորություն կունենան արդյունավետ վերահսկելու տնօրինվող ակտիվների տեղաբաշխման ճյուղային կառուցվածքն ըստ բնութագրիչ ռիսկերի:

4. Մշակվել է առևտրային բանկերի գործունեության թվային փոխակերպման գործընթացում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության ճկուն համակարգ, որով հնարավորություն է ստեղծվում բարելավելու վերահսկողական գործընթացները և միաժամանակ բացահայտելու ֆինանսական միջնորդության էկոհամակարգի արտաքին ու ներքին ռիսկային մարտահրավերները:

#### **Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրատարակումները:**

Հետազոտության հիմնադրույթները և գիտական արդյունքները քննարկվել և արժանացել են հավանության Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնում: Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 6 գիտական հոդվածներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, գիտական արդյունքներն ու նորոյթները, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Հետազոտության առաջին՝ «**Առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերահսկողության տեսամեթոդական հիմքերը**» գլխում ներկայացվել են տեսական և կիրառական հայեցակարգեր, մոդելներ և մոտեցումներ կապված ֆինանսական ռիսկի գնահատման և կառավարման հետ: Այն հիմնական մոդելները, որոնք օգտագործվում են վարկային ռիսկի գնահատման ժամանակ՝ Մերտոնի, KMV վարկային հսկողության և MOODY'S PUBLIC FIRM մոդելներն են:

Շուկայական ռիսկի գնահատումը բանկերում ընդունված է կատարել «Value-at-Risk (VaR)» մոդելների օգտագործմամբ: Հիմնականում VaR մոդելները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ Գծային մոդելներ, պատմական մոդելներ և Մոնտե Կառլոյի սիմուլյացիա: Այսպիսով՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը. VaR-ն արտացոլում է պորտֆելի ռիսկայնությունը՝ հիմնվելով դրա կազմի, վստահության մակարդակի և ժամանակի հորիզոնի վրա: VaR-ի առավելություններից է՝ օգտակար է պորտֆելի ռիսկերի վերահսկման համար, կարող է չափել բազմաթիվ ֆինանսական գործիքների ռիսկը (օրինակ՝ բաժնետոմսեր, պարտատոմսեր, ապրանքներ, արտարժույթ, ածանցյալ գործիքներ և այլն), որպես գործիք՝ շատ օգտակար է պորտֆելն ընտրված հենանիշի հետ համեմատելու համար, դյուրին ցուցանիշ է՝ հաճախորդներին հասկացնելու և բացատրելու տեսանկյունից:


Հետազոտության երկրորդ՝ «**ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը**» գլխում ներկայացվել են ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերահսկողության մոտեցումները, վարկային ռիսկ կրող ակտիվների վրա մակրոտնտեսական և ներքին գործոնների ազդեցության մոդելային գնահատումը, ֆինանսական ռիսկերի ներքին

---

<sup>1</sup> Աղբյուր: Moorad Choudhry, Didier Joannas, Richard Pereira, Rod Pienaar. "Capital Market Instruments: Analysis and Valuation " Palgrave Macmillan, 3rd edition (2008): pp 457-461

վերահսկողությունում առկա հիմնախնդիրները և դրանց վերհանման ուսումնասիրությունները:

Դիտարկելով ՀՀ բանկերի չաշխատող վարկերի գործակիցը ամսական կտրվածքով (զձապատկեր 1)<sup>2</sup> կարելի է նկատել, որ այդ ցուցանիշը 2016 թ. առաջին եռամսյակում հասել է 6,8%-ի, ապա 2018 թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել է նվազման միտում՝ հասնելով 4,8%-ի: 2018 թ.-ից սկսած՝ նկատվում է աճ, որն ավելի ակնառու է դառնում 2021 թվականի երկրորդ եռամսյակում (2020 թ. չորրորդ եռամսյակում՝ 5,0%)<sup>2</sup>:



**Գծապատկեր 1<sup>3</sup>. Չաշխատող վարկերի դինամիկան ՀՀ առևտրային բանկերում**

Հետազոտության առանցքում ՀՀ բանկային համակարգի վարկային ռիսկի սթրես թեստավորումն է, որը հեղինակը իրականացրել է պարզ զգայունության թեստի և հավանական սցենարների մեթոդի միաժամանակյա օգտագործմամբ<sup>4</sup>: Ընդհանուր առմամբ, հեղինակը փորձել է ՀՀ առևտրային բանկերը դիտարկել 1 պատմական և 2 հավանական շոկային սցենարների համատեքստում և դրանք կառուցել ենք ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 9-ի («Ֆինանսական գործիքներ») պահանջով<sup>5</sup>: Որպես պատմական սցենար՝ ընդունվել է առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5 տոկոսի դուրսգրումը՝ հիմնված վերջին տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած ֆորսմաժորային (պատերազմներ, հեղափոխություն, համավարակ) դեպքերի, ինչպես նաև արտաքին և ներքին այլ գործոնների վրա, որոնք չեն

<sup>2</sup> Official webpage of Ceicdata <https://www.ceicdata.com/en/indicator/armenia/non-performing-loans-ratio>

<sup>3</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը՝ CEIC-ի տվյալների հիման վրա:

<sup>4</sup> Committee on the Global Financial System, “Stress testing by large financial institutions: current practice and aggregation issues”, CGFS Paper No. 14., April 2000, p. 6.

<sup>5</sup> Ֆինանսական հաշվետվությունների միջազգային սրահային սրահային 9՝ «Ֆինանսական գործիքներ», <http://eifrs.ifs.org/eifrs/bnstandards/hy/2018/ifrs09.pdf>



շրջանցել ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը: Համաձայն երկրորդ սցենարի՝ ենթադրվում է, որ առևտրային բանկերի վարկային պորտֆելից դուրս է գրվում 2-րդ և 3-րդ փուլերում (զամբյուղներում) դասակարգված վարկերի 70 տոկոսը, իսկ Համաձայն երրորդ սցենարի՝ սթրես թեստավորման ժամանակ արձանագրվել է առևտրային բանկերի վարկային պորտֆելի առաջին և երկրորդ զամբյուղներում դասակարգված վարկերի 5 տոկոսի և երրորդ զամբյուղում դասակարգված վարկերի 80 տոկոսի դուրսգրում:

Վերոնշյալ սցենարների դիտարկման արդյունքում կարելի է եզրակացնել, որ վարկային ռիսկի սթրես թեստավորման ենթարկված բանկերն իրենց բնականոն գործունեությունը շարունակելու համար աչքի են ընկնում չափավոր դիմացկունության աստիճանով: Ընդ որում, չորս բանկ՝ «Այրի Բանկ» ՓԲԸ-ն, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն և «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն, ունեն բավարար ֆինանսական ռեսուրսներ երեք սցենարի ժամանակ նորմատիվային խախտումներ թույլ չտալու համար: Միաժամանակ, նորմատիվները խախտած բանկերում առաջին սցենարով սթրես թեստավորման ժամանակ նկատվել է նույն օրինաչափությունը՝ ընդհանուր կապիտալի ցածր արժեք՝ ռիսկով կշռված ակտիվների համագումարի համեմատ: Կարևոր է, որ վերոնշյալ երեք բանկերի համար ՆՊ նորմատիվի շեղումը եղել է մեկ տոկոսի սահմանում, որը կարելի է վերականգնել լրացուցիչ գործառնություններ կատարելու շնորհիվ: Երկրորդ և երրորդ սցենարներով սթրես թեստավորման ժամանակ նորմատիվների խախտման հիմնական պատճառը բանկերում 3-րդ փուլում դասակարգված վարկային պորտֆելի մեծ լինելն է: Վերոնշյալ նորմատիվները չխախտելու նպատակով բանկերը կարող են դիմել մի շարք կարգավորիչ գործառնությունների, մասնավորապես՝ հաճախորդի վճարունակությունը բարձրացնելու նպատակով կարող են վերանայել վարկային ակտիվները՝ վարկային տոկոսադրույքի նվազեցմամբ, ժամկետի երկարացմամբ, տույժ և տուգանքների զիջմամբ, որից հետո, երբ հաճախորդը վարկի պարբերական մարումները որոշակի ժամկետում իրականացնի առանց ուշացման, վարկային ակտիվը տեղափոխել 1-ին կամ 2-րդ զամբյուղ և գրանցել:

Հետազոտության մեջ խնդիրն է դրվել պարզելու ՀՀ-ում չաշխատող վարկերի գործակցի վրա մակրոտնտեսական և բանկային գործոնների երկարաժամկետ ազդեցությունը<sup>6</sup>: Մի շարք փոփոխականների

<sup>6</sup> Ա. Համբարձումյան, Մ. Մետրոպոլիտ, Վերահսկողական սթրես թեստավորումը որպես ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերը կատարելիցելու նոր գործիք, «Բանկեր ՀՊՏ» գիտական հանդես, 2022, 2-րդ համար:

ազդեցությունը չաշխատող վարկերի գործակցի վրա զգալի է, որն ուսումնասիրելու նպատակով ընտրվել է բազմակի ռեգրեսիայի մոդելը: Ստացված արժեքները, որոնք նաև ռեգրեսիոն մոդելի փոփոխականների գործակիցներն են և սթրես թեստերից ստացված արդյունքները, ներկայացվում են աղյուսակ 1-ում: Կոռելյացիոն մատրիցի դիտարկումից հետևում է, որ չաշխատող վարկերի գործակցի վրա էական ազդեցություն ունի միայն գործազրկության մակարդակը, այսինքն՝ գործազուրկների թիվը սերտորեն փոխկապակցված է չաշխատող վարկերի գործակցի հետ: Ավտոկոռելյացիաների առկայության ստուգումը կատարվել է Բոյլ-Քոդֆրիի սերիական հարաբերակցության թեստի և Դուրբին-Ուոթսոն վիճակագրության արժեքը վերլուծությամբ:

Կախյալ փոփոխական: Չաշխատող վարկերի գործակից				
Մեթոդ: Least Squares				
Ընտրանք: 2013M01-2020M12				
Դիտարկումների քանակ: 96				
Փոփոխական	Գործակից	Ստ. սխալ	t-Statistic	P- Արժեք
<i>Ոչ ռեգիդենդ անձանց տրված վարկեր</i>	-0.32386	0.036306	-8.920195	0.0000
<i>Վառելիքի գին</i>	0.494613	0.120805	4.094287	0.0001
<i>Տնտեսական ակտիվության ցուցանիշ</i>	-0.133997	0.022033	-6.081491	0.0000
<i>Սպառողական գների համաթիվ</i>	-0.246271	0.048319	-5.096763	0.0000
<i>Գործառնական արդյունավետություն</i>	0.080082	0.017042	4.698915	0.0000
<i>Գործազրկության մակարդակ</i>	1.481732	0.080203	18.47464	0.0000
<i>ԱՄՆ դոլար</i>	0.483615	0.093020	5.198993	0.0000
<i>C</i>	9.466803	0.188656	50.18013	0.0000
-				
R-squared	0.899939	Mean dependent var	6.822306	
Adjusted R-squared	0.891980	S.D. dependent var	1.482753	
S.E. of regression	0.487326	Akaike info criterion	1.479889	
Sum squared resid.	20.89885	Schwarz criterion	1.693585	
Log likelihood	-63.03471	Hannan-Quinn criter	1.566269	
F-statistic	113.0674	Durbin-Watson stat	1.649894	
Prob(F-statistic)	0.000000	-	-	

**Աղյուսակ 17.** Ուսումնասիրության գնահատման արդյունքները

Հաջորդ քայլով փորձ է կատարվել պարզելու հետերոսկեդաստիկությունը՝ այդ նպատակով օգտագործելով Ուայթի և Գլեյզերի թեստերը: Հարկ է նշել, որ դրա կատարման արդյունքում ընդունվել է հոմոսկեդաստիկության առկայության զրոյական վարկածը: Այնուհետև ստուգելու համար, թե արդյոք նմուշի տվյալներն ունեն շեղվածություն, որը կհամապատասխանի նորմալ բաշխմանը, հեղինակը օգտագործել է Ջարկ-Քերայի թեստը: Հիմք

<sup>7</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը

ընդունելով  $7.05e-16$  միջին արժեքը, որը մոտավորապես հավասար է 0-ի, և 0.829359 հավանականության արժեքը, կարելի է հաստատել այն վարկածը, որ տվյալների շեղվածությունը գրոյական մակարդակում է: Կարելի է հավաստել, որ հեղինակի կողմից կառուցված ռեգրեսիոն մոդելն ունի որոշման բարձր գործակից և նշանակալի F-վիճակագրություն, և բոլոր ռեգրեսիոն գործակիցները վիճակագրորեն նշանակալի են: Մոդելում բացակայում է պատահական շեղումների մնացորդների միջև ավտոկոռելյացիան, պատահական շեղումների մնացորդների շեղվածությունը նույնն է բոլոր փոփոխականների համար, այսինքն մոդելում բացակայում է հետերոսկեդաստիկությունը, բոլոր գործոնները սեզոնային առումով ճշգրտված են, իսկ շեղվածությունը՝ նորմալ բաշխված: Հետևաբար՝ մոդելը կարելի է օգտագործել գործնական ոլորտում՝ չաշխատող վարկային ակտիվների կանխատեսման նպատակով կամ վերահսկողական սթրես-թեստավորման գործընթացում: Վերոնշյալ ռեգրեսիոն մոդելի բարձր որակը հաստատվում է նաև կախյալ փոփոխականի փաստացի և հարմարեցված արժեքների միջև շատ փոքր տարբերությամբ (զճապատկեր 2):




**Գծապատկեր 2<sup>8</sup>.** Չաշխատող վարկային ակտիվների (ՉՎԱ) փաստացի և հարմարեցված արժեքները

Հետազոտության երրորդ՝ «**Ներքին վերահսկողության հեռանկարային տենդենցները և բարելավման ուղիները**» գլխում ներկայացվել են թվային փոխակերպման ընթացքում բանկերի ներքին

<sup>8</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը

վերահսկողության համակարգի խնդիրների լուծման մոտեցումը, Լինդայի և Էնթրոպիա համաթվերի ու համաժամանակյա (վերահսկիչ) սթրես-թեստավորման կիրառումը որպես ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման նոր և արդյունավետ ուղիներ:

Հեղինակը նախ և առաջ անդրադառնում է **վերահսկիչ սթրես թեստավորմանը**: Վերջինս ոչ միայն կնպաստի ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովմանն ու ամրապնդմանը, այլև կխթանի կառավարության տնտեսական քաղաքականությանն աջակցելու՝ ՀՀ ԿԲ կանոնադրական նպատակների իրականացումը: Միաժամանակ, հեղինակի կարծիքով դա կնպաստի ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր նպատակների իրագործմանը՝ ապահովելու առևտրային բանկերի անվտանգությունն ու «առողջությունը» և համամասնական մոտեցմամբ խթանելու արդյունավետ մրցակցությունը: Գծապատկեր 3-ը ներկայացնում է առանձին բանկերին ուղղված վերահսկիչ սթրես-թեստերի մեկ տեսակի պատկերումը: Սթրես-թեստերը կարող են ներառել նաև տարբեր կամ լրացուցիչ գործառնություններ, ինչպիսիք են ֆինանսական շուկայի այլ մասնակիցների կանխատեսված վարքագծի արձագանքը՝ ի պատասխան անբարենպաստ սցենարի: Արդյունքները թույլ կտան ԿԲ-ին ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, օրինակ՝ ստեղծել մակրո- և միկրոտնտեսական կապիտալի պահուստներ և այլն: Հարկ է նշել նաև, որ համաժամանակյա սթրես թեստերում կարելի է օգտագործել որոշակի բանկերի սթրես թեստերի արդյունքները: Ուսումնասիրելով այլ սցենարներ և համաժամանակյա սթրես թեստավորման արդյունքներ՝ հեղինակի կարծիքով ՀՀ ԿԲ-ն կզինվի ավելի հարուստ տեղեկություններով, որպեսզի իրականացնի հնարավորինս արժանահավատ ուսումնասիրություն:



**Գծապատկեր 3<sup>9</sup>. Վերահսկիչ սթրես-թեստի պատկերում**

<sup>9</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը

Բազելյան կոմիտեի սահմանած սկզբունքների համաձայն՝ վերահսկիչ սթրես թեստերի արդյունքները հիմնականում օգտագործում են վերահսկողները՝ ստուգելու և վավերացնելու բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության գնահատման ներքին գործընթացը<sup>10</sup>: Այս համատեքստում՝ ՀՀ ԿԲ-ն կարող է օգտագործել վերահսկիչ սթրես թեստերի արդյունքները՝ կապիտալի պահանջները տարբեր ձևերով սահմանելու համար, օրինակ՝ բանկի կապիտալի հավելյալ շեմի սահմանում կամ դրա պլանավորման գործընթացի որակի գնահատում:

Հաջորդիվ անդրադարձ է կատարվում **թվային փոխակերպման ընթացքում բանկերի ներքին վերահսկողության համակարգին**: Կայծակնային արագությամբ զարգացող տեխնոլոգիաներն անխուսափելիորեն դառնում են բիզնեսի գոյատևման և հարմարվողականության մակարդակի բարձրացման առանցքային գործիքներ: Աշխարհը դեռևս ակնատես չի եղել նմանատիպ փոխակերպումների<sup>11</sup>: Այս պարագայում բիզնեսի հաջողելու սպասումներն էլ ավելի են աճում<sup>12</sup>: Սակայն, այսօր բավարար չէ պարզապես բաց լինել տեխնոլոգիայի համար, բանկերը պետք է հետևողական լինեն, որ կազմակերպության բոլոր մակարդակները հաջողությամբ մասնակցեն թվային փոխակերպման գործընթացին<sup>13</sup>:

Գծապատկեր 4-ում պատկերվածը կարելի է ընդունել որպես ուղեցույց հաջող թվային փոխակերպման համար: Թվային փոխակերպման կիրառումը ՀՀ առևտրային բանկերում հեղինակի պնդմամբ կարող է ապահովել մի շարք առավելություններ, մասնավորապես՝ բարելավված արտադրողականություն՝ օպտիմալացման և ավտոմատացման միջոցով, իրական ժամանակում տվյալների հավաքագրում բանկի՝ իրական ժամանակում գործունեության մեջ, բանկային գործունեության անընդհատության ապահովում՝ ըստ առաջադեմ սպասարկման և մշտադիտարկման հնարավորությունների, ռիսկերի բարելավված կառավարում և այլն:

---

<sup>10</sup> Basel Committee on Banking Supervision, “Supervisory and bank stress testing: range of practices”, Basel, December 2017, p. 23.

<sup>11</sup> Justenhoven, P., Loitz, R. & Sechser, J. (July, 2018). Digitalisation in finance and accounting and what it means for financial statement audits. PricewaterhouseCoopers International Limited.

<sup>12</sup> Sher, A., Ehrenhalt, S. & Englert, J. (2018). Crunch time V Finance 2025. Deloitte Development LLC.

<sup>13</sup> Deloitte Touche Tohmatsu Limited (2020a). Realizing the digital promise: Top nine challenges to digital transformation for financial institutions. A paper from the Institute of International Finance and Deloitte.



**Գծապատկեր 4<sup>14</sup>. ՀՀ առևտրային բանկերի՝ հաջող թվային փոխակերպման ուղեցույց**

Այնուհետև հեղինակը անդրադառնում է ֆինանսական կազմակերպություններում եկամտաբեր ակտիվների **համասեռ բաշխմանը**<sup>15</sup>: Ակտիվների հնարավորինս համասեռ բաշխումը կամ բազմազանեցումը (դիվերսիֆիկացումը), ըստ տնտեսության ճյուղերի, տարածաշրջանների կամ վարկանիշային գնահատականների, թույլ է տալիս կազմակերպություններին զսպել հնարավոր վարկային ռիսկերը, այսպիսով՝ ապահովելով ֆինանսական կայունություն ու գործունեության անընդհատություն: Հետազոտությամբ պարզ է դառնում, որ դեռևս գոյություն չունի այնպիսի մի համաթիվ, որն ամբողջովին անսխալ ցույց կտա կենտրոնացվածության մակարդակը բոլոր իրավիճակներում: Բայց և այնպես, Էնթրոպիայի համաթվի (աղյուսակ 2) հաշվարկի հիմքում առկա մասնաբաժինների լոգարիթմումը բացառում է Հերֆինդալ-Հիրշմանի համաթվի հնարավոր սխալները (աղյուսակ 3): Ինչ վերաբերում է Լինդայի համաթվին, ապա վերջինիս կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրա միջոցով հնարավոր է պարզել կենտրոնացված ոլորտների միջուկը,

<sup>14</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը

<sup>15</sup> Ա.Համբարձումյան, «Կենտրոնացման՝ Լինդայի և Էնթրոպիայի ինդեքսները որպես վարկային ռիսկի կառավարման գործիք», «Ալլընպրանք» գիտական հանդես, 2023, 1-ին համար:

իսկ սա նշանակում է, որ կարելի է բացահայտել ոչ միայն կենտրոնացվածության մակարդակը, այլև այն ոլորտները, որտեղ ավելի բարձր է վարկային պորտֆելի կենտրոնացվածության մակարդակը: Հաշվարկման ժամանակ նաև պարտադիր չէ ներառել տնտեսության բոլոր ոլորտները: Սա իսկապես էական է այն տեսանկյունից, որ բոլոր բանկերում առկա է վարկային պորտֆելի մի հատված, որը հնարավոր չէ վերագրել տնտեսության որևէ որոշակի ճյուղի:

Բանկ	2023		2021	
	Է արժեք	log2n	Է արժեք	log2n
«Ալբա Բանկ» ԲԲԸ	2,81044	3,169925	2,466162	3,169925
«Ամերիաբանկ ՓԲԸ	3,202096	3,70044	3,441305	3,70044
«Արարատբանկ» ԲԲԸ	2,342454	2,807355	2,561001	2,807355
«Արդշինբանկ» ՓԲԸ	3,382969	3,70044	3,370774	3,807355
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	2,492195	3	2,669148	3
«HSBC-Արմենիա» ՓԲԸ	2,594522	3,169925	2,650311	3,169925
«Ինելոբանկ» ՓԲԸ	2,610186	3,321928	2,418802	3,169925
«ԱՅ-ԴԻ Բանկ» ՓԲԸ	2,640804	3,169925	2,477437	3,321928

**Աղյուսակ 2<sup>16</sup>.** Կենտրոնացվածության մակարդակի գնահատումն ըստ էնթրոպիայի համաթվի

Բանկ	2023		2021	
	HHI արժեք	Կենտրոնացում	HHI արժեք	Կենտրոնացում
Ալբա Բանկ ԲԲԸ	0,16694	միջին	0,231065	Բարձր
Ամերիբանկ ՓԲԸ	0,135411	միջին	0,108733	Միջին
Արարատբանկ ԲԲԸ	0,228423	բարձր	0,193343	Բարձր
Արդշինբանկ ՓԲԸ	0,11669	միջին	0,109387	Միջին
Կոնվերսբանկ ՓԲԸ	0,210961	բարձր	0,182058	Բարձր
HSBC-Արմենիա ՓԲԸ	0,226806	բարձր	0,208476	Բարձր
Ինելոբանկ ՓԲԸ	0,215246	բարձր	0,260283	Բարձր
ԱՅ-ԴԻ Բանկ ՓԲԸ	0,183107	բարձր	0,257103	Բարձր

**Աղյուսակ 3<sup>17</sup>.** Կենտրոնացվածության մակարդակի գնահատումն ըստ Հերֆինդալ-Հիրշմանի համաթվի

Լինդայի համաթվի ուսումնասիրմամբ կարելի է տեսնել, որ կենտրոնացվածության միջին մակարդակի վարկային պորտֆել առկա է

<sup>16</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի՝ 2021 և 2023 թթ. 4-րդ եռամսյակների վերաբերյալ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

<sup>17</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի՝ 2021 և 2023 թթ. 4-րդ եռամսյակների վերաբերյալ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

«Արդշինբանկ» ՓԲ և «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություններում: «Արդշինբանկ» ՓԲԸ-ի վարկային պորտֆելում կենտրոնացվածության միջուկը կազմում է 13 ոլորտից 8-ը: Գերակշիռ ոլորտը «Շինարարություն»ն է (85 մլրդ ՀՀ դրամ), որը գրեթե 2 անգամ գերազանցում է «Առևտուր» ոլորտին (47 մլրդ ՀՀ դրամ): «Ամերիաբանկ» ՓԲ-ում կենտրոնացվածության միջուկը կազմում է 13 ոլորտից 3-ը. գերակշիռ ոլորտները երեքն են՝ «Շինարարություն» (122 մլրդ ՀՀ դրամ), «Առևտուր» (120 մլրդ ՀՀ դրամ) և «Գյուղատնտեսություն» (100 մլրդ ՀՀ դրամ): Կենտրոնացվածության բարձր մակարդակի վարկային պորտֆել առկա է «HSBC-Արմենիա Բանկ» և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ներում: Վերջիններիս վարկային պորտֆելներում կենտրոնացվածության միջուկը կազմում է համապատասխանաբար՝ 9 ոլորտից 7, 10 ոլորտից 6-ը և 6 ոլորտից 2-ը:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում հեղինակը ներկայացրել է հետևյալ հիմնական եզրահանգումները՝

- ՀՀ առևտրային բանկերում սթրես թեստավորման միջոցով վարկային ռիսկի կառավարման գործընթացի վերլուծության արդյունքում բացահայտվում է բանկային ոլորտի ճկունության աստիճանը, ինչպես նաև կարևոր պատկերացումները տարբեր անբարենպաստ սցենարների դեպքում: Սթրես թեստավորման մոտեցման շնորհիվ՝ և՛ զգայունության թեստերի, և՛ հավանական սցենարների օգտագործմամբ ապահովվում է հստակ շրջանակ՝ այս ֆինանսական հաստատությունների կայունությունը և ռիսկի վերահսկման կարողությունները գնահատելու համար:

- Արձանագրված արդյունքներն ընդգծում են ուժեղ կապիտալացման և վարկային ռիսկի ակտիվ կառավարման կարևորությունը: Բանկերը, որոնք ճկունություն են ցուցաբերում սթրեսային սցենարների դեպքում, լավ դիրքերում են բնականոն գործունեությունը շարունակելու համար: Միաժամանակ, շեշտադրվում է վարկային խելամիտ գնահատման և վարկերի որակի շարունակական մշտադիտարկման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ այն վարկերի համար, որոնք դասակարգվում են ավելի բարձր ռիսկային կատեգորիաներում:

- Սթրես թեստավորումը ծառայում է որպես կարևոր գործիք՝ ռիսկերի մասին իրազեկման մակարդակը բաժրացնելու և ՀՀ բանկային ճկուն և կայուն հատվածի գործունեությունը խթանելու տեսանկյունից:

- Ատենախոսության մեջ ուսումնասիրվել է նաև մակրոտնտեսական և բանկային գործոնների երկարաժամկետ ազդեցությունը ՀՀ չափսատող վարկերի գործակցի վրա: Օգտագործելով 2013 - 2020 թթ. ընկած ժամանակային շարքերի տվյալների բազան՝ գծային ռեգրեսիոն մոդելների



օգնությամբ դիտարկվել է չաշխատող վարկային ակտիվների (ԶՎԱ) և այլ գործակիցների ու գործոնների միջև նշանակալի կապը: Արդյունքում պարզ է դարձել, որ քննված 22 գործոնից յոթն ազդում է ԶՎԱ գործակցի վրա: Ընդ որում, դրանցից չորսը դրական էր, ինչը ցույց է տալիս, որ այս գործոնների աճը համապատասխանում է ԶՎԱ գործակցի աճին: Այս գործոնները վերաբերում էին ոչ ռեզիդենտներին տրվող վարկերին, տնտեսական ակտիվության ցուցանիշին, սպառողական գների համաթվին և գործազրկության մակարդակին: Մյուս երեք գործոնները բացասական էին, ինչը ենթադրում է, որ դրանց աճը կապված էր ԶՎԱ ավելի ցածր գործակցի հետ: Դրանք վերաբերում էին դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքին, վառելիքի գներին և գործառնական արդյունավետությանը:

- Համաժամանակյա (վերահսկիչ) սթրես թեստավորման մոտեցման ուսումնասիրությամբ ցույց է տալիս, որ վերջինիս կիրառումը մեծապես կնպաստի ֆինանսական համակարգերի ամրապնդմանը: Նշված սթրես թեստերը կնպաստեն ինչպես ՀՀ ֆինանսական համակարգի կայունության պաշտպանությանը և ամրապնդմանը, այնպես էլ կառավարության տնտեսական քաղաքականությանն աջակցելու՝ ՀՀ ԿԲ կանոնադրական նպատակների իրականացմանը:

- Նույն կերպ, դրանք կաջակցեն ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր նպատակներին՝ ապահովելու բանկերի անվտանգությունն ու առողջությունը և համամասնական մոտեցման միջոցով խթանելու արդյունավետ մրցակցություն: Արդյունքները թույլ կտան ԿԲ-ին ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, օրինակ՝ ստեղծել մակրո- և միկրոտնտեսական կապիտալի պահուստներ և այլն: Վերահսկիչ սթրես թեստավորումը, միաժամանակ, կարող է օգնել ռիսկերի կառավարման փորձի բարելավմանը բանկային հատվածում՝ բացահայտելով առկա բացերը և մշակելով համապատասխան ուղղիչ գործողություններ և կարող է բարելավել հաղորդակցությունն ու թափանցիկությունը ՀՀ-ում՝ բանկերի և կարգավորող մարմինների միջև:

- Ցույց են տրվել բանկերի՝ թվային հաջող փոխակերպման առավելությունները՝ բարելավված արտադրողականության բարձրացում, իրական ժամանակում տվյալների հավաքագրում, գործունեության անընդհատության ապահովում՝ առաջադեմ սպասարկման և մշտադիտարկման հնարավորություններով, արդյունավետ որոշումների կայացում, ռիսկերի բարելավված և խարդախության ավելի արդյունավետ կանխարգելումը:

- Անդրադարձ է կատարվում հեղինակի կողմից մշակված մոտեցմանը, որի միջոցով բանկերը կկարողանան հաղթահարել թվային փոխակերպման

Ժամանակ հանդիպած մի շարք մարտահրավերները: Մոտեցման հիմքում ընկած է չորս գործոն՝ մարդիկ, գործընթաց, տվյալներ և տեխնոլոգիա:

• Անդրադարձ է կատարվում ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի կենտրոնացվածության գնահատմանը: Գնահատման մեջ, հիմնվելով բանկերի 2021 և 2023 թթ. ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, օգտագործվել է երեք կենտրոնացման համաթիվ՝ Հերֆինդալ-Հիրշմանի, Լինդայի և Էյթրոպիայի: Ուսումնասիրելով վարկային պորտֆելների բաշխումը՝ պատկերացում է ձևավորվել նշյալ համաթվերի արդյունավետության մասին՝ ռիսկերի կառավարման և գնահատման գործընթացներում առ այն, որ դեռևս գոյություն չունի այնպիսի մի գործակից, որն ամբողջովին և անսխալ կերպով ցույց կտա կենտրոնացվածության մակարդակը բոլոր իրավիճակներում: Ուստի անհրաժեշտություն է առաջանում օգտագործել փոխլրացնող այնպիսի գործակիցներ, ինչպիսիք են վերոնշյալ երեք համաթվերը, որոնց համալիր կիրառման ընթացքում կստանանք կենտրոնացվածության իրական պատկեր:

***Արենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հեղինակ գիտական հոդվածներում՝***

- A.Hambardzumyan, Embracing Finance 4.0: the Opportunity for Armenian Banks to Transform and Thrive, Messenger of ASUE, 2023, N1,
- А. Амбарцумян, Стресс тестирование кредитных рисков на примере коммерческих банков РА, IScience, Актуальные научные исследования в современном мире, выпуск 2(70) ч. 7, Переяслав, 2021,
- Ա. Հակոբյան, Ա. Համբարձումյան, ՀՀ առևտրային բանկերի վարկային կորուստների այլընտրանքային գնահատման հիմնախնդիրները, Բանբեր ՀՊՏՀ գիտական հանդես, 2021, 3-րդ համար,
- Ա.Համբարձումյան, Մ. Մեսրոպյան, Վերահսկողական սթրես թեստավորումը որպես ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերը կառավարելու նոր գործիք, Բանբեր ՀՊՏՀ գիտական հանդես, 2022, 2-րդ համար,
- Ա.Համբարձումյան ՀՀ բանկերի թվայնացման հիմնական ռազմավարությունները, «РЕГИОН И МИР», 2023, 2-րդ համար,
- Ա.Համբարձումյան, Կենտրոնացման՝ Լինդայի և Էյթրոպիայի ինդեքսները որպես վարկային ռիսկի կառավարման գործիք, Այլընտրանք գիտական հանդես, 2023, 1-ին համար:

## АРМАН САМВЕЛОВИЧ АМБУРЦУМЯН

### ОСНОВЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ВНУТРЕННЕГО КОНТРОЛЯ ФИНАНСОВЫХ РИСКОВ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится в 11 июля 2024 года в 15.00, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

#### АННОТАЦИЯ

Изучение надзорного стресс-тестирования, методов коэффициента концентрации и цифровой трансформации имеет важное значение для развития коммерческих банков Армении. Эти исследования предлагают практические инструменты для управления рисками, оценки концентрации и сохранения конкурентоспособности. Внедрение этих инструментов укрепит внутренний контроль, повысит финансовую стабильность и поддержит экономическое процветание коммерческих банков РА.

**Цель и задачи исследования.** Целью диссертации является разработка рекомендаций по улучшению системы внутреннего контроля финансовых рисков в коммерческих банках РА на основе проведенного исследования. Для достижения этой цели были поставлены следующие задачи:

- анализ процессов управления финансовыми рисками и контроля в банках РА;
- изучение правовых актов РА и международных норм, регулирующих деятельность коммерческих банков, для выработки рекомендаций по экономическим нормам и контролю рисков;
- оценка эффективности надзорного стресс-тестирования для выявления и снижения финансовых рисков;
- исследование рисков кибербезопасности в процессе цифровой трансформации банков и разработка стратегий их смягчения;
- оценка влияния цифровой трансформации на внутренний контроль финансовых рисков;

- изучение концентрации кредитных вложений и анализ коэффициентов концентрации с целью выявления уязвимостей и повышения финансовой устойчивости банков РА.

**Объект и предмет исследования.** Объектом диссертации является система внутреннего контроля финансовых рисков, используемая в коммерческих банках, действующих в РА. Предметом диссертации являются вопросы стресс-тестирования, факторов концентрации и внедрения инструментов цифровой трансформации в контексте внутреннего контроля финансовых рисков в коммерческих банках РА.

**Научная и практическая значимость результатов исследования.** Диссертация представляет собой всестороннее исследование методологических подходов к внутреннему контролю финансовых рисков коммерческих банков РА, предлагая конкретные рекомендации для улучшения. Результаты могут быть применены в центральных и коммерческих банках Армении, а также полезны преподавателям и исследователям в области финансов и управления рисками.

**Основные научные результаты и новизна диссертации:** Основным результатом диссертации является разработка новых подходов к предотвращению финансовых рисков через совершенствование системы внутреннего контроля коммерческих банков. Это подкрепляется следующими научными инновациями:

1. Определены особенности распознавания и оценки финансовых рисков в системе внутреннего контроля коммерческих банков РА. На их основе предложен усовершенствованный инструментарий для управления рисками, основанный на комплексном факторном анализе.
2. Обоснована и уточнена необходимость использования надзорного стресс-тестирования как инструмента для комплексной оценки и снижения рисков в банках РА.
3. Разработан подход к оценке диверсификации финансовых рисков на основе аналитических результатов коэффициентов Херфиндаля-Хиршмана, Линды и энтропии.
4. В процессе цифровой трансформации коммерческих банков создана гибкая система внутреннего контроля финансовых рисков, позволяющая совершенствовать процессы контроля и выявлять внешние и внутренние рискованные вызовы в экосистеме финансового посредничества.

**ARMAN HAMBURDZUMYAN**

**THE BASICS OF IMPROVING INTERNAL CONTROL OF FINANCIAL RISKS OF RA COMMERCIAL BANKS**

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the specialty 08.00.03 “Finance, Accounting”

The defense of the thesis will take place on July 11, 2024 at 15.00 at 014 Council of Economics of SCC RA at the Armenian State University of Economics. Address: 128 Nalbandyan St., 0025, Yerevan, Armenia.

**ABSTRACT**

The study of supervisory stress testing, concentration ratio methods, and digital transformation is crucial for the ongoing development of commercial banks in Armenia. These studies provide both theoretical frameworks and practical tools for managing financial risks, assessing industry concentration, and maintaining competitiveness in the digital era. Implementing these tools will enable Armenian commercial banks to reinforce internal controls, enhance financial stability, and continue delivering essential banking services to the public. This, in turn, will foster economic flexibility and prosperity, emphasizing the relevance of the topic and the importance of applying the research findings.

**The purpose and objectives of the study:** The dissertation aims to develop recommendations for enhancing the internal control system of financial risks in commercial banks of the Republic of Armenia based on the research conducted. To achieve this goal, the following objectives were established:

- Analyze financial risk management and control processes in Armenian banks.
- Examine the legal acts of the Republic of Armenia and international standards regulating the activities of commercial banks to develop recommendations on economic standards and risk control.
- Assess the effectiveness of supervisory stress testing to identify and mitigate financial risks.
- Investigate cybersecurity risks during the digital transformation of banks and develop strategies to mitigate these risks.
- Evaluate the impact of digital transformation on the internal control of financial risks.
- Study the concentration of credit investments and analyze concentration ratios to identify vulnerabilities and enhance the financial stability of Armenian banks.

**Object and subject of research:** The object of the dissertation is the system of internal control of financial risks used in commercial banks operating in the Republic of Armenia. The subject of the dissertation is the issues of stress testing, concentration factors and the implementation of digital transformation tools in the context of internal control of financial risks in commercial banks of the Republic of Armenia.

**Theoretical and practical meaning of the research results:** This dissertation presents a comprehensive study of methodological approaches to the internal control of financial risks in commercial banks of the Republic of Armenia, offering specific recommendations for improvement. The results can be applied in both central and commercial banks of Armenia and will also be valuable for educators and researchers in finance and risk management.

**The main results and the novelty of the dissertation:** The primary outcome of the dissertation is the development of new approaches to preventing financial risks by enhancing the internal control system of commercial banks. This is supported by the following scientific novelties:

1. Identified features of recognizing and assessing financial risks in the internal control system of commercial banks in the Republic of Armenia. Based on these features, an improved toolkit for risk control, grounded in complex factor analysis, has been proposed.
2. Clarified and substantiated the need for and directions of using supervisory stress testing as a tool for comprehensive risk assessment and reduction in Armenian banks. It has been demonstrated that simultaneous modeling of various stress scenarios provides a more complete picture of the risks faced by banks, reveals their vulnerabilities, and helps develop a robust risk management strategy aimed at ensuring the banks' flexibility and financial stability.
3. Developed and proposed an approach to assessing the diversification of financial risks, based on complementary analytical results from the Herfindahl-Hirschman, Linda, and entropy coefficients.
4. In the context of the digital transformation of commercial bank activities, a flexible system for internal control of financial risks has been established. This system enhances control processes and simultaneously identifies external and internal risk challenges within the financial intermediation ecosystem.

